

«ԵԶՆԻԿ ԿՈՂՐԱՑՈՒ ՀԱՍԱՐԱՐԱՌ»-Ի ԱՌԹԻՎ

ԺՈՐԱ ՔՈՍՈՒՆՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» ամսագրում վերջերս լույս տեսավ բանասիրական գիտությունների թեկնածու Անդրանիկ Զեյթունյանի հոդվածը՝ նվիրված Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի մեր կազմած բնագրային համաբարբառին, որում հոդվածագիրը փորձել է վեր հանել համաբարբառի արժանիքներն ու թերությունները:

Վերոհիշյալ հոդվածից¹ երևում է, որ Ա. Զեյթունյանը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է հիշյալ համաբարբառը և նրանում հայտնաբերել անճշտություններ: Նրա դիտողությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ մասնագիտական և մեթոդական:

Հոդվածում արված դիտողությունների մի մասը ճիշտ է և ընդունելի. այսպես՝ համաբարբառից դուրս են մնացել մի քանի հարադրական բառերի բաղադրիչներ, ճիշտ չի ներկայացվել է բառի խոսքիմասային պատկանելությունը², սխալմամբ նաև առանձին բառահոդվածով են ներկայացվել երկու բաղադրյալ թվականների բաղադրիչները, համաբարբառում կան տեխնիկական վրիպակներ:

Ա. Զեյթունյանը համաբարբառի ամենամեծ թերությունը համարում է այն, որ իբր այնտեղից դուրս են մնացել 7 բառահոդվածներ՝ աներկեղ, ժամանեցուցանել, լուրջ, պատիւ, պատկեր, պատկերանալ, սեպնականալ և մի քանի բառահոդվածների առանձին նախադասություններ: Մինչդեռ այդ բառահոդվածներից չորսը՝ աներկեղ, պատիւ, պատկեր, պատկերանալ, ժամանակին նկատվել են մեր կողմից և առանձին հավելվածով տրվել համաբարբառի վերջում՝ «Բաց թողնված բառեր և բառահոդվածներ» խորագրի տակ, ուր տեղ են գտել նաև անցուցանել, բաց, գին, խաշ, ծովացուլ, պատասխանի, պատիժ և պատճառ բառերի կիրառությունների մեր բացթողումները: Իսկ ժամանեցուցանել և սեպնականալ բառերը տպագրի օրինակ են մտցվել հրատարակչի ձեռքով, հետևաբար, համաբարբառում դրանք տեղ չէին կարող գտնել, քանի որ Եզնիկի երկի միակ ձեռագրում չկան³:

Հոդվածագիրն առաջարկում է ի լրջեաց մակբայի՝ երկրորդ բաղադրիչը տալ նաև լուրջ ձևով: Հասկանալի է, որ եթե դա լիներ լուրջ բառի բացառական հոլովը, ապա կունենար ի լրջաց ձևը, ոչ թե՛ ի լրջեաց:

Խոսքիմասային փոխանցման հետևանքով տարբերակված բառաձևերը համաբարբառում ներկայացվել են նոր խոսքի մասի արժեքով, ինչպես՝ ի բնէ, մեղմով, յանգգայ: Դրանք բոլորն էլ մակբայներ են: Այդպիսի բառե-

¹ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 8, էջ 56—67:

² Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 6, 12:

³ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1097, և Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (Աղանդների հերքումը), Քարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 192—193, ծան. 10, 11:

րից էր նաև ի լրջեաց կազմությունը: Բայց կան նաև այնպիսի բառեր, որոնք դեռևս ամբողջությամբ չեն անցել նոր խոսքի մասի շարքը: Դրանցից է ի ծնէ բառը, որը ներկայացվել է որպես բացառականի հոլովածև: Հետևաբար, Ա. Զեյթունյանը իզուր է այս հարցում մեզ հակասության մեջ մեղադրում:

Հոգվածագիրը պնդում է, թե առանձին բառահոգվածներով պիտի ներկայացվեն նաև «Եզնիկ Կողբացու»-ի, նրա շորս գրքերի (գլուխների) և «Խորաբարբառ»-ի խորագրերի բառերը: Մինչդեռ բանասիրությանը շատ վաղուց հայտնի է, որ դրանք ավելացվել են տպագրության ընթացքում և բացակայում են երկի ձեռագրում⁴: Ուրեմն, դրանք Եզնիկի գրածը չեն և, բնականաբար, չէին կարող մտնել համաբարբառի մեջ:

Դրաբարի համաբարբառի բաժինն ունի քարտերի մշակման և համաբարբառի կազմման որոշակի կանոններ ու սկզբունքներ, թեև հոգվածագիրը հակված է կարծելու, թե այդպիսիք չկան քարտարանում: Այդ սկզբունքներից մեկի համաձայն էլ՝ երբ հարադրական բարդության բաղադրիչներն ունեն նաև առանձին բառական արժեք, ներկայացվում են առանձին բառահոգվածով: Այդպես էլ վարվել ենք ազդեցութիւն բնական, դեղ մաճու, չորեֆին բնութիւֆ, պաշտօն ճարկանել, սկիզբն առնուլ և նման այլ հարադրությունների հետ, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրը ներկայացված է ամբողջությամբ և բաղադրիչներով: Դա արված է գիտական և ոչ թե համաբարբառը «ուռնացնելու» նպատակով:

Բոլորովին այլ է միադիմի բայերի խնդիրը. միադիմի բայն ունի մեկ բառի արժեք, ինչպես՝ պարտ է, ճարկ է, պատշաճ է, մարթ է և այլն: Այդ պատճառով էլ դրանք ներկայացվել են միայն մեկ անգամ:

Համաբարբառում, որպես կանոն, բայերի համար իբրև գլխաբարբառ վերցվել է անորոշ դերբայը, իսկ մյուս դերբայներն ու դիմավոր ձևերը դրվել են անորոշի տակ: Անցյալ և ենթակայական դերբայական ձևերը, երբ հանդես են եկել իբրև բայ, մտել են անորոշի տակ, իսկ երբ, խոսքիմասային փոխանցման օրինքի համաձայն, վերածվել են գոյականի կամ ածականի, առանձնացվել են և տրվել առանձին բառահոգվածով: Այդ կարգի բառերից են՝ առաքեալ, կատարեալ, ճեծեալ, մեռեալ, կարուղ և այլն: Օրինակ՝ «Եւ առաքեալ հրեշտակ ի տուն Մանուէլի»⁵ նախադասության ընդգծված բառը ներկայացվել է որպես բայ, իսկ «Զորմէ ասէն Առաքեալ»⁶ նախադասության մեջ՝ որպես գոյական: Մինչդեռ Ա. Զեյթունյանը այդպիսի տարբերակումը համարում է անհետևողականության արդյունք:

Հոգվածադրին պետք է հայտնի լիներ, որ մեսրոպյան շրջանում իլ մասնիկի գործածությունը կրավորական սեռի բայերի և ի լծորդության պատկանող բայերի համար հատկանշական չէր, ուստի և համաբարբառ կազմողը արհեստականորեն չէր կարող ներկայացնել այնպես, որպես չի գրել Եզնիկը իր ժամանակին:

Տարբերացվածները ներկայացնելը մասնագիտական մեծ հմտություն պահանջող աշխատանք է: Դա իր հերթին գիտական մի հետազոտություն է:

⁴ Եզնիկ Կողբացի, Եզնիկ, Երևան, 1970, էջ 190, ծան. 2:

⁵ Եզնիկ Կողբացի, Եզնիկ, Վենետիկ, 1826, էջ 94—95:

⁶ Նույն տեղում, էջ 67:

Համաբարբառ կազմողները, սովորաբար, այդպիսի միջամտություն չեն անում, նրանք տալիս են միայն տողատակի ծանոթագրությունները, ինչպես արվել է, օրինակ՝ Մ. Խորենացու Պատմության բառացանկում կամ էլ ուղղում են բացահայտ վրիպակները, ինչպես արվել է Կորյունի երկի համաբարբառում (աբպէս, քէ, եթէ, քէպէտ բառերը գրքում տպված են ե-ով, համաբարբառում տրվել են է-ով):

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի տվյալ հրատարակությունը շունի ծանոթագրություններ, համաբարբառում եղած բոլոր տարրնթերցվածները, որոնց թիվը հասնում է մի քանի տասնյակի, տվել է համաբարբառի խմբագիր, պրոֆ. Ա. Աբրահամյանը: Ըստ որում, դրանց գլխաբառերը տրվել են այնպես, ինչպես գրքում են, իսկ փակագծում՝ սրբագրված ձևը. օրինակ՝ ճեշմակապատ (ճիշտը՝ ճեշմակապաշտ): Իսկ ստորեւայի բառը ներկայացվել է ս-ի տակ, փակագծում նշելով (գրքում՝ աստրեւայի), որովհետեւ այդ բառը նշվել է դեռևս առաջին տպագրության վրիպակների ցանկում⁷:

Ըստ հոգվածագրի, հակասություն է առաջացել, երբ մարդ||մարդիկ, կասկած||կասկածաբե, պատճառ||պատճառաբե և նման այլ բառեր տրվել են տարբեր բառահոգվածներով, իսկ կիճ-կանայի, պաշաճ-պաշտամունք բառերը՝ ոչ: Միթե պարզ չէ, որ առաջին շարքի զուգահեռ ձևերը տարբեր բառական միավորներ են (օրինակ՝ կասկած բառի հոգնակին կասկածք է և ոչ թե կասկածաբե), իսկ երկրորդ շարքի զուգահեռ ձևերը նույն բառի հոգնակիներն են:

Ա. Զեյթունյանի կարծիքով, սխալ է որոշված մի շարք բառերի խոսքի-մասային պատկանելությունը: Այսպես՝ «Եւ ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս և ոչ ա՛ռ ա՛ռ» նախադասության ընդգծված բառերը տրվել են հավելվածում՝ ունել գլխաբառի տակ, իսկ կալ գոյականի տակ սխալմամբ են ընդգծվել: Դրանք ունիմ բայի հրամայական եղանակի ձևերն են, իսկ հոգվածագիրը գտնում է, որ դրանք պետք է տրվեին կալնուլ բայի տակ:

Համաբարբառի կազմման սկզբունքների համաձայն՝ դերանունների հոգնակիները տրվում են եզակիի տակ: Այդպես էլ վարվել ենք մեք, դուք, նոքա և այլ դերանունների հետ:

Մի շարք անեղական բառեր, ինչպես՝ Հայք («Հայաստան կամ հայ ժողովուրդ»), եպիկուրեանք, պիթագորեանք, պլատոնեանք և այլն (բոլորն էլ հավաքական իմաստով) ներկայացվել են այդ ձևով, իսկ Ա. Զեյթունյանը գտնում է, որ դրանք պետք է տալ եզակիի տակ:

Համաբարբառի կազմման սկզբունքներից մեկն էլ բառերի խիստ այբբենական կարգով դասակարգումն է: Ըստ որում, երկակի գրություն ունեցող միևնույն բառերը դրվում են տարբեր տեղերում. օրինակ՝ անձնիւ||անցնիւ, գիւլ||գեւ, թիւն||թոյն, երկեզ||երկիւ և այլն:

Ա. Զեյթունյանը սխալ է համարում որոշ նախադասությունների կրճատումը և, որպես օրինակ, բերում է «Եւ տեսեալ, ասէ, աստուածոյն օրինաց որ տէր էր աշխարհի՝ թէ ազնուական է Ադամ եւ արժանի սպասաւորութեան»⁹ նախադասության «Տեսեալ... աստուածոյն օրինաց... թէ ազնուական է Ադամ»

⁷ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1970, էջ 213, ծան. 185:

⁸ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 103:

⁹ Նույն տեղում, էջ 244—245:

մեր կրճատումը՝ տեւեալ և ազնուական ռառերի համար՝ ձիշտ է, որ երկրորդական նախադասութիւնները համազոր են, և մենք առաջին ռազագրիչի համար վերցրել ենք վերոհիշյալ կրճատված անսքով, հսկ երկրորդ ռազագրիչի համար՝ «Ազնուական է Ադամ և արժանի սպասաւորութեան» հատվածը: Մեր կարծիքով, այստեղ ո՛չ քերականական սխալ կա, և ո՛չ էլ ոճական: Իսկ Ա. Զեյթունյանը ընագրից մի քանի նախադասութիւններ է վերցրել և թույլ է տվել կոպիտ սխալ, այսպես՝ «Կայցեն առաջի ահողատենին, ոմանք ի կեանսն յաւիտենականս, և ոմանք ի պատիժս դատաստանի»¹⁰ նախադասութիւնը նա իր հոգվածում օղաագործել է այսպիսի կրճատմամբ՝ «Ոմանք (կայցեն) ի պատիժս դատաստանի»¹¹:

Ա. Զեյթունյանը գտնում է, որ աշխատութիւնը պետք է ունենար առաջարան: Սա ճիշտ դիտողութիւն է:

Համարարառում իրոք կան անխնդական վրիպակներ և սխալ ընդգծումներ, որոնք հատորը դրամեքենայով հրաատարակելու հետեանք են: Բայց տարօրինակ է, որ Ա. Զեյթունյանի հիշատակած վրիպակների մեջ կան այնպիսիները, որոնք արված են վրիպակների ցանկում, օրինակ՝ անճան ռառը, Յոճան մկրտիչ ռազագրյալ անվան երկրորդ ռազագրիչը գրքում¹² տպված է փոքրատառով, այդպես էլ ներկայացվել է համարարառում:

Ինչպես երեսց շարադրանքից, հոգվածագրի բաւժրացրած շաա հարցեր կապված են համարարառ կազմելու սկզբունքների հետ: Նրա առաջարկութիւնների մի մասը հաշվի կառնվի հետագա աշխատանքի ընթացքում:

ПО ПОВОДУ «КОНКОРДАНСА ЕЗНИКА КОХБАЦИ»

ЖОРА ТОСУНЯН

Резюме

Недавно в журнале «Вестник общественных наук» («Լրաբեր», 1977, № 8) была опубликована статья А. Зейтуняна, в которой автор делает попытку проанализировать текстуальный конкорданс произведения Езника Кохбаци, составленный нами. Согласно А. Зейтуняну, в конкордансе, якобы, отсутствуют семь слов и несколько употреблений отдельных слов. Однако все эти пропуски в свое время были обнаружены нами и даны в приложении. Некоторые замечания А. Зейтуняна касаются принципов составления конкорданса. Часть этих и других замечаний будет учтена в дальнейшей работе.

¹⁰ Նույն տեղում, էջ 296:

¹¹ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 8, էջ 58:

¹² Նույն Կոդրացի, Նոր ազանդոց, Վենետիկ, 1826, էջ 266: